

զար, որոնց Հ. տղայի Շիրակաւանէն երբեմն գերի բերած կը-
պահէր իր մօտ:

ՊՈՂՈՍ Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՑՈՂՈՒԹԻՒՆՔ.

(Նարո-Նախելլ).

Ա. յժմ՝ մօտենանք եկեղեցիներին:

Նոքա երկու են և միմեանց կից. երկուսն ես փոքր են կրտ-
շաղաղ և սագաշէն: Հիւսիսայինը հասարակի իսկ հարաւայինը
սրբատաշ քարից. հիւսիսայինը մի և կէս արշինով երկայն է
միւսից: Հիւսիսայինը ունի մի դուռն արեմուեան պատում և
երկու լուսամուտ՝ արեւելեան և արեւմուեան պատերում: Յա-
տակը կոկած է աւաղակրով: Աւագ բեմի վերայ բազմեցրած է
վէմ քարը. հիւսիսային պատում ունի մի խորան փոքրիկ քե-
մով: Հարաւային պատի մէջ մի դուռն տանում է հարաւային
եկեղեցու մէջ: Նա չունի ոչ աւաղան և ոչ արձանագրութիւն:
Հարաւայինը ունի արեմուեան պատում մի մուտք, ուր կա-
խուած է փայտեայ դուռը Հերհէր գիւղի ժողովրդի շինած.
Լուսամուտները զետեղուած են արեմուեան ու արեւելեան
պատերում: Յատակն աւաղակրով կոկած է: Միջին որմնափակ
բոլորակ սիւնը բաժանում է աւագ բեմը երկու հաւասար մա-
սի իւրեանց առանձնակի վէմ քարերով: Աւաղան և խորան
չկան: Տանիքի հարաւային կողմը բաւականին վնասուած է:
Արտաքին զարդերից ուշադրութեան արժանի է հարաւային
պատի արեւի ժամացոյցը հայկական տառերով մասամբ եղ-
ծուած: Արեմուեան լուսամուի վերը փորագրած է կատաղի ար-
ծիւ, որ մագիլների մէջ սեղմած է մի խոյ: Սորա շուրջը գրած

է, թվին ԶԼԱ. (731). Սորանից ոչ հեռու մի արձանագրութիւն արդէն մաշուել է:

Եկեղեցիների հիմնաքարը, որ ժայռի մի մասն է, ճեղքուելով կազմել է մի բեկոր և սպասում է ժամանակի ազգեցութեան կամ մի թեթև երկրաշարժի, որպէս զի նետուի ցածիւր հետ տանելով եկեղեցիների շինութիւնը, Հարաւային եկեղեցին ունի իւր ներսն և գուրսը շատ արձանագրութիւններ, որոնցից մի քանիսը Զալալեանի գրքի մէջ Հյիշած լինելով՝ արտագրում եմ այստեղ:

Արեմտեան դռնից դէպի հարաւ, արտաքուստ, գրած է թվ. ԶԼ (708) և Ստեփաննոս Սիւնեաց արհի եպիսկոպոս զմեր հայրենի գիւղն Զակոշ իվանս սուրբ ուխտ տուաք հայրենիք է-ը Ճաղակութել ի յիշատակ Հոգւոյ իմոյ՝ ով որ հակառակ կայ ՑՃ (318) սուրբ Հայրապետաց նղոված։ Ո՞վ է այս Ստեփաննոս եպիսկոպոսն և ԲՇնչպիսի այժմ անյայտ գիւղ է ընծայել մենաստանին։ Սա գուցէ լինի այն եպիսկոպոսը, որ Օրբելեան Ստեփաննոս եպիսկոպոսից 25 տարի առաջ գահակալում էր Նորալանքում։ Հետեւալ արձանագրութիւնն առաջինի տակ այս է։ Եռ Յակոր միաբանեցայ սուրբ ուխտիս, միաբանք Ա. Ժամ սահմանեցին սուրբ Յակորի տօնին։

Ներսի արձանագրութիւնները Զալալեանի գրքի մէջ շատ աղաւաղած են և ամենակարևոր արձանագրութիւններն անգամ կիսատ պուատ լինելով Հարկագրուած եմ արտագրել լիովին։ իսկ միւսներն ուղղել միայն։ Հարաւային պատի վերայ գրած է Կամաւն Հօրին Աստուծոյ այս գիր յիշատակի և արձան անջնջելի մեծաշուք պարոնին Վարհամայ, որդւոյ Վասակայ, թոռն մեծին Մագիստրոսի և բարեպաշտուհոյ Մանդղայ ամուսնոյ իւրոյ և գեղեցիկ պտղոյ նորա Ուքանայ և քաջազօրին և մեծ արապոտին (գուցէ սպարապետին) Վարհամայ և քրիստոսասէր մաւրն իմոյ Մականայ և բարետոհմիկ աւրիորդ ամուսնոյն իւրոյ Գոնցային, որ մեծաշան աշխատութեամբ շինեցին զեկեղեցիս և բազում սպասիւք զարդարեցին յաղագս արքայութեան իմոց և երկարութեան կենաց ամուսնոյ և զարմցն իւրեանց Ուքանայ, Հասանայ . . . նուէրքս իսուրբ ուխտն

Ղքարաթաղին այդին վերին հատուին . . . կոռ արտով . . . եզրն որ մեծ առյնէ գնալա ի վերոյ . . . ընկոյղին յերիցա կալերէն. Գ. Հող ո՞ղբարբ . . . կողմիքն մինչև վաճախն և մեծապատիւ (գուցէ) հատուցաք բոր պարոնացն Դ. մաս . . . Գ. պատարագ Ուքանայ . . . զատկին, Դ. Մամբանայ վարդ . . . կատարեն, ովլ խափանէ դատի յԱստուծոյ . . . մարմնով. թվ. 21.Բ (732) գրեցաւ.»

Արևմտիան պատից դէպի հիւսիսայինը ձգուում է հետեւալ արձանագրութիւնը: «Կամաւն հզօրին Աստուծոյ եռ Սմբատ որդի Նիզարատի յաղգէն Աւրպելէնց որ ի Մոր (գուցէ Մոուր, Եղիպատոս) գերի կացի, Աստուծոյ կամօքն աղառեցայ . . . զամուսին իմ Ոիլիթոգ (Բնէ է) . . . որ յետ Բ. ամի փոխեցաւ . . . և յետ եղբարցն բաժանեցայ . . . ինձ հասաւ եռ Սմբառ զիութինքթին . . . հողն սուրբ Աստուծածածնիս անչարութեամբ վարդապետք և միաբանքս ետուն տմեն . . . համբարձմանն Ա. ինձ Սմբառիս . . . ովլ իմ աղգէս կամ յօտարէն . . . Եկեղեցոյս . . . Աստուծոյ ամենակալ բերանէն նզոված եղիցի և ՅԺ Հայրապետաց կապած. ի թվ. հայոց 242. (766). *):

(*) Աւելորդ չհամարեցի գնել այսանդ Զալալեանի գլուխ մէջ եղած արձանագրութեանց ովլիսաւոր վրիպակները:

Զալալ. Տանա- պարչ. Հ. Բ. Կր.	ՍԽԱԼ.	ԱԽԱՒԴ.
140.		
Արձանագր. Ա.	... Զինչ այլ հոգւոյ բաժին Զինչ այլ հոգւոյ բաժին կը:	
	շէր	
» Գ.	... Թեւջիս . . . թվ. 21 Հեւջիս . . . թվ. 21 . . .
» Դ.	... Զարանոցիս չարէքն ի . . . Զարանոցիս չարէքն ի շիւանէն, ս-	... Զարանոցիս չարէքն ի շիւանէն . . .
Երես 141 արձ Բ.	Սուրբ Սիօնի տակի հողն . . . առաքք.	Սուրբ Սիօնի տակի հողն վարդապետէնց առաքք.
» Դ.	իմ որդիքս Սարգիս Լահեր.	Ես Սաթուն, իմ որդիքս Սար- գիս, Շահերշ, և այլն:
» Ե.	Ամաղենայ որ տղերգք ի . . . Ամաղինայ որ տղաւրուք կա- քրիսառս կամեցան գիփիմեցաւ անդ ի սուրբ գիրքն. սուրբ գիրքն.	

Տաճարիս կցկուր պատմութիւնը կազմելու համար գիմենք արձանագրութեանց. որոնցից սոյն նպատակի համար նշանաւոր է վերը յիշած Մագիստրոսի թուն Վարհամ՝ իշխանի և նորա Գոնցայ ամուսնոյ արձանագրութիւնը, նոքա իւրեանց որդւոց Ուբանի և Հասանի կենաց երկարութեան համար բարեջան աշխատութեամբ շինել են եկեղեցին 732—1283 թուին և զարդարել են նորան շատ սպասներով։ Սոյն տաճարի արևմրտեան լուսամտի վերը արծուի շուրջը գրած է թվ. 21.Ա. (731—1282)։ Այս երկու թուականները ցոյց են տալի եկեղեցւոյ շինութեան տարին։

Եթէ Վարհամ՝ իշխանի թուականը համեմատենք Ստեփան-նսս արհի եպիսկոպոսի քերած թուականի հետ (708—1259) կգունենք ժամանելու բարբերութիւն։ Խնչպէօ բացառինք արդեօք, վերջին թուականից հինը չըկայ այս տեղ, Վարհամի արձանագրութիւնը ցոյց է տալի ուղղուկի եկեղեցին կառուցանողներին և թուականը հապա ինչի՞ 24 տարի շինութիւնից առաջ երեացել է Ստեփաննոս եպիսկոպոսի արձանագրութիւնը։ Ենթագրել ուրեմն պէտք է որ կամ եպիսկոպոսի յիշեալ թուականը սխալ է կամ թէ եկեղեցին շինած է եղել սոյն այս թուականից շատ առաջ և Վարհամ՝ իշխանի ժամանակ նու ենթարկուել է վերանորոգութեան։ Այս հանգամանքը բացայայտ կերպով ապացուցանում է հանգուցեալ Աբէլ Արքեպիսկոպոսի սխալը, որ այս տաճարի կառուցման տարին որոշումէ 1321 թուականին։ *)

Երես 142. ար-
ձանագ, Ա.

Բ.	Ռոշարաթի հողն ջաղացի գուն տուի սուրբ Աստուա- գուն տովի վախմ սուրբ Աս- ծածնիս.	Բոշարաթի հողն ջաղացի գուն տուածու գուն տովի ապի վախմ սուրբ Աս- ծածնիս.
Բ.	Ես Գրիգոր Դուիին Յա- նուց Խաւդի տափի այգին. . գոր Դուիին որդի յառինջ Բ. պատարագ կատարիչ խաչի տափի այգին... Բ. պա- տարագ Ասփնայ կատարիչ ք.	Ես կամաւ Աստուծոյ Գրի- գորինց Խաւդի տափի այգին. . գոր Դուիին որդի յառինջ Բ. պատարագ կատարիչ խաչի տափի այգին... Բ. պա- տարագ Ասփնայ կատարիչ ք.
Ե.	Ես Աղբարս կանգնեցի.	Թ. 21 (740) ես Աղբարս կանգնեցի.

(*) Արարատ. 1873 թ., հոկտեմբ. Ժամանակագրութիւն շինումեանց վանօրէից։

Վիճելի մի խնդիր յառաջ է գալի նաև տաճարիս կոչման մասին։ Զալալեան արքեպիսկոպոսի գիրքը մկրտում է նորան «Սուրբ Սիօն»*) և մինչև անգամ սորան է ընդունում Օքրելեանի պատմութեան մէջ յիշած Ալեն լւաւն, որ պայծառանում էր ճգնաւոր մարդկանցով ութերորդ գարի առաջին քառորդում։ Եւ գուցէ նորանից օրինակ առնելով՝ նոյն Սուրբ Սիօն տնունը տալիս է և Արէլ Արքեպիսկոպոսը **)։ Բայց աչքի տնօնելով սոյն վանքի բոլոր արձանագրութիւնները իրեւ տմոն եղբակացութեանց միակ աղքիւր, մենք կաեսնենք որ «Սուրբ Սիօն» բառերը յիշուում են երկու և եթ արձանագրութեանց մէջ այս ձևով, «առաջ սուրբ Սիօնի տակի հողն և տուաք Սուրբ ուխու։» Միւսն այսպէս «իմ որդիքս Սարգիս, Շահերշ զմեր սուրբ Սիօնի տակի հողն ի սուրբ ուխած առւխնք։ Ենթագրում եմ որ Սիօն բառը գործ է ածուել որոշելու ոչ թէ տաճարի անունը այլ նուիրած հողերի տեղերը։

Հակառակ կարծիք հաստատելու համար նայեցէք Սմբատ Աւրպէլեանի վերը յիշած արձանագրութիւնը «զԴուինքթին... հողն Սաւակ Աստուածածնին անչարութեամբ.» կամ հարաւային պատի արտոքուստ արձանագրութիւնը «Կամաւն Աստուծոյ ես Սերութէ Արեգէս առի զԲոշարաթի հողն ջաղացի գուռն տուի վտխմ Սաւակ Աստուածածնին, ով հակառակի անիծած է։» Պարզ չէ ուրեմն որ տաճարի անունը Սուրբ Աստուածածին է և ոչ սուրբ Սիօն։ Բայց թէ ուր է Սիօնը, որի տակի հողերը նուիրել են այս տաճարին, ես այդ չգիտեմ։ Զգիտեմ նոյնպէս թէ երկու կից եկեղեցիները միևնուն անունն են կրել, թէ առանձին անուններ. ի՞նչ է հաստրակ եկեղեցու անունը, մի՞ գուցէնա է սուրբ Սիօն։ Սակայն այդ հաստատելու համար չկայ ոչ մի յիշառակութիւն։

Սուրբ Աստուածածին եկեղեցին ունի իւր պատերի վերայ ներսից և գրուց հինգ անթուական և տասն թուականով արձանագրութիւններ։ Վերջինները կազմում են սուսանելից տա-

(*) Զալալ. Ճանապարհ. Հ. Բ. երես 140.

(**) Արարատ 1873 հոկտեմբեր:

բեշրջան, այն է 708 թուականից մինչև 794 հայկական թուականը: Ամբողջ 86 ատրի եղած են սոյն վանքում նուրիբատուռները: Սոցա թուում եղած են Զակոշ գիւղը, Էր ժաղավորութունը, մի սրանոցի (Ճիթահանի) քառորդ մասը, ութիւր կտոր հող և երեք այգի մինը Առինջ գիւղում: Ուր են այժմ՝ արգեօք Զակոշ գիւղը, Սիօնի տակը, Բոշարաթ, Դազարափոս, Կաւարտին, Աղջրատափ, Բամբակ հող և այլ տեղեր, այդ անկարելի է այժմ որոշել, թայց Հերհէր գիւղից արևելք, բերդաբլիի արևելեան ստորոտում մացառուտ հովտի մէջ բղխում է բաւական առասա հանքային երկաթաջուր: Մի գուցէ սորանից առնուած Աղջրատափը լինի այդ հովիտը:

Մի հետաքրքիր երեսոյթ՝ նուրիրուում է Առւրբ Աստուածածին եկեղեցւոյն Զակոշ գիւղը Էր ժաղավորութունը: Ամբողջ Դարալագեազի հնութեանց մէջ միայն երկու տեղ է յիշաւում որ գիւղը նուրիրուում է իւր ժողովրդով, մինը այս Զակոշ գիւղի միւս Զիվայ գիւղի վերաբերութեամբ: Վերջինս նուրիրուում է Ամաղուի Նորալանքին:

Սուրբ Աստուածածնի նուրիրատուների կարգում՝ եղած են իւր Ժամանակին նշանաւոր մարդիկ: այն է Սիւնեաց արհի եպիսկոպոս Ստեփաննոսը, Վահրամ իշխանը, նարա որդի քաջզօրավար Ուքանը, Սմբատ Աւրղելեանը, Տարսային իշխանի փեսայ Դուռինց Գրիգորը և այլն: Ապա ուր են վանահայրերը, միաբանքը, եկեղեցական դասը, որոնք զարդարում էին այդ վայրը և հրապուրում էին յիշեալ նուրիրատուներին: Տարաբաղդաբար՝ մեզ հասած արձանագրութիւնները չեն յիշում նոցաւ:

Դիմելով տապանաքարերին, մենք տեսնում ենք նորանց 1559ից մինչև 1649 թուականները: Ուրեմն թէ այս քարերը և թէ այն գերանը, որ ամրացած է պարսպի տակ և որի մասին յիշուեցաւ վերը, ապացոյց են որ այժմեան աւելակ, ամայի, անտէք և անտիրական եկեղեցիները ունեցել են կենդանութեամ նշոյլ նաև մինչև Դարալագեազի վերջին աւերումները: Եկեղեցուն երբեմնակի, այն էլ շատ հազիւ, այցելում են մօտակայ Հերհէր գիւղի հայ ժողովուրդը, ուխտ են անուամ: ճրագ են վա-

ւում, խունկ են ծխում և աղօթում։ Որոշակի ուխտի օր չունի։

Խնձպէս արձանագրութիւններից տեսանք վերը, տեղւոյն իշխան Վարհամ իշխանը և իւր ամսւափն Գոնցայն կառուցանելով (կամ նորոգելով) Սուրբ Աստուածածնի եկեղեցին զարդարել են սպասներով և նուրիել են հողեր։ Վարհամի իշխանաւրութեան մասին յիշուում է իւր՝ Վարհամի, նորա կնոջ Գոնցայի և սորորե գրելի Շաշ միայնակեցի արձանագրութիւններից։ Սակայն նորա իշխան երկրի սահմանները յայտնի չեն լովի հաւանական է որ Հերհէրի գետի աւազանից աւելի չպէտք է լինէր։ Վահրամ և Գոնցայ ամսւափնները ունեցել են երեք որդիք։ Ուքան, Հասան և Ամադին։ Հպւանական է որ Ուքանի մարմինը հանգուցած լինի Դօշավանքի Սուրբ Աստուածածին եկեղեցում (գլ. ԼԵ.) 775—1326 թուականիս, գեղեցկաքանդակ տապանաքարի տակ գեղեցիկ արձանագրութեամբ «Զաղնիւն յընտրեալսն և զքաջն ի զօրականոն զպարոն Ուքանն յիշեցէք» թվ. ԶՀԵ (775)։

Վերջապէս թողնում եմ՝ այս վայրը և գետակի հոսանքը բռնած՝ իջնում եմ Հերհէր գիւղի վերայ։ Ճանապարհն և ամբազջ գաշտավայրը այնքան քարոտ է, որ արտօրայից քարերը ժաղոված նորանց եզրների վերայ՝ հազար տեսակ ձեւի և ուղղութեան ցանկապատեր են ներկայացնում վարելահողերի շուրջը։ Այս քարերը Դալիկ-թափայի այն արտավիժմունքն են, որ ձգել է գէպի հիւսիս և արևելք։

Մտնում եմ Հերհէր գիւղի մէջ, Քարի առատութիւնից՝ բնակչաց տները, շինութիւնները, պարաւէ զների ցանկապատերը՝ բոլորը քարից է։ Փողոցները ծուռ, ոլոր մոլոր, ինչպէս միւս գիւղերում, տակը քարոտ, վերը քարոտ միով բանիւամենայն տեղ քար։ Դետակը քերում է գիւղի եզրը։ Հերհէրի բնակիչները խառն են՝ հայ և թուրք։ Հայք կազմում են 48 գերդաստան 200 արական և 180 իգական անդամներով, ընդամենը 380 հոգի, իսկ թուրքերը 610 հոգի։ Հայերը գաղթած են այստեղ Խիսիանու Ալելու գիւղից, կարծեօք յիսնական թուականում։

Սէյադ մականուն՝ Պետրոս Մադաթեանը դիտումամբ գորանց բնակեցնելով Հերհերում, մտադիր էր՝ իբրև տեղական կառավարիչ՝ մի քիչ ժամանակից յետոյ գալիթեցնել այդ տեղից թուրքերին հայերի ազատութեան համար։ Սակայն նորա պաշտօնով տեղափախութիւր արգելք եղաւ իւր մտադրութիւնը իրագործելու, ուստի հայերը մինչեւ այսօր մնացին թուրքերի հետ խառն։ Ամբողջ Դարալագեազում այս միակ գիւղն է որ պատահմամբ հայերը խառնուել են թուրքերի հետ։ Երկու միմեանց հակառակ աարբների խառն կեցութիւնը այստեղ մեծամեծ չարիք են յառաջանում՝ ի վնաս բարոյականութեան։ և անաեսութեան հայ համարնակիշների։ Քանիցս անգամ՝ խեղճ հայերը կամեցել են առանձին գիւղ կազմել։ բայց հողի սակաւութեան համար Դարալագեազում ոչ իւրեանք են կարողացել ազատ հող գտնել աեղափախութելու և ոչ էլ թուրքերը մասգիր են թողնել քարքարուտ Հերհէրը։

Դիւրի եղուում, ժայռի գլխին, գետի վերայ կանգուն կայ հին, երկայն քարաշէն եկեղեցի, որի մէջ կատարւում է ժամասացութիւնը Հերհէրի հայ ժողովրդի համար։ Կիւղի հիւսիսային կողմնում՝ փողոցի վերայ, փոքր պարտիզի մէջ՝ անկարելի է, որ իւրաքանչիւր ձանապարհորդի աշքին չզարնի իւր մեծութեամբ՝ քարէ պատուանդանի վերայ վեց ամերողջ դար կանգուն մի արձանագար այս գրութեամբ, « Ես Գրիգոր որդի Վարհումայ Հայրին որ մնաց ի պատերազմին հասմ՝ կանգնեցի խաչս, յիշէք ի Քրիստոս. թ. ԶԼԱ. (731)։ »

Սոյն այս արձանիս ոչ հեռու մի հայ շինականի տան բագում քանիցս անգամ ինձ ցոյց են տուել մի գետնալիոր ճանապարհ, բերանը քարակոյտով ծածկուած, որի խորքերը թէպէտ չեն երեւում, սակայն միջից շարունակ լսուում է քամու սրընթաց սառը հոսանքը։ Հերհէրը եղած է երբեմն բազմարնակ տեղ։ Ամբողջ հինգ վերաս տարածութեան վերայ Հերհէրի շառըն սփռուած են տների աւերակներ, ընդարձակ հանգստարաններ բազմաթիւ մահարձաններով, կանգուն և արդէն խոնարհուած խաչքարին, Սակայն տների աւերակները հայեատ չեն, ինչպէս պնդում է Զալալեանի գիրքը, այլ հասարակ քարը վե-

բայ դարսած, կոշտ և կոպիտ գիւղական տներ: Բոլոր այդ հնութիւնները գուցէ մնացել են մի քանի կից գիւղերից, կամ գուցէ եղած է մի ընդարձակ աւան:

Արդեօք ի՞նչ է այս գիւղի նախկին անունը: Հերհէր կոչումը ոչ մի յիշատակարանի մէջ չէ երեռւմ: բայց Օրբելեանի գիւղօրէից ցուցակի մէջ յիշուած է Երեւն գիւղ, որի նոյնահնչիւն կոչումից ես եզրակացնում եմ որ այժմեան Հերհէրը կարող է լինել նախկին նրերն:

Հերհէրի գէմ հանդիման, գէպի արեելք, գետակի ծախ ավից բաւականաչափ հեռու իւր գագաթը ի վեր ամրարձած կանգնած է մի վիթխարի բլուր, որ իւր շրջապատ լեռներով հանգերձ կոչվում է Գետրաղ: Բլուրը և նորա շրջապատ լեռները, որոնց մեծ մասը ձորերով, հովիտներով և բարձրութիւններով տարածուում են գէպի արեելք Արփաչայ գետը և գէպի հիւսիս—Մուրագ թափայ լեռնային արօտատեղին՝ այդ բոլոր տարածութիւնը ծածկուած է վայրենի անտառով:

Յիշեալ բլուրի գագաթը բարձրացած մենք այնահեղ կընկատենք միմեանց վերայ դարսած մեծամեծ քարերից շինած շրջապատ պարսպի հետքեր: Երեռում է, որ այդաեղ եղած է երբեմն բերդանման պատսպարան, բայց փոքր գիրքով, առանց բերդերին յատուկ պարագայից, այն է առանց հորերի, սենեակների, ջրամբարի և այլն: Կայ միմիայն մի մատրանման հասարակ շինութիւն, իւր երեք խաչքարերով, որոնցից մինը կրում է այս արձանագրութիւնը «Ես մարգարէս որդի Գագիկ երիցոյ աթոռակալի կեցոյ (եկեղեցոյ) կանգնեցի զիա (չս) թվիս ՈՂԶ. (696):»

Վայոց ձորի որ բերդն է արդեօք սա: Զէ կարելի արդեօք ենթադրել որ սա լինի Կառոյա բերդը, որ թուրքերը բառացի թարգմանութեամբ շինած լինին Գետրաղ: Կապոյտ բերդը յիշուում է Օրբելեանի պատմութեան մէջ *):

Բերդաբլրի գագաթում կանգնած հայեացք ձգելով շուրջա, ես տեսնում եմ Հերհէրը նորա արեմտեան ստորսատում: Նո-

(*) Օրբ. պատմ. տանն Սիս. դլ. Գ.

բանից հեռու Գալիք-թափան է իւր մօտակայ քարձրութիւն-ներով: Դէպի հիւսիս անտառապատ ըլուրներ են և հովիտներ և շատ հեռու Մուրադ թափայ սարն է: Դէպի արևելք-նոյն անտառոտ լերանց շարունակութիւնն է, որոնց խորագոյն ճեղքուածով հոսում է փրփրալից Արփաչայը և սորտ ափում՝ քերգի հանդէպ Գնդեվազ գիւղն Գնդեվան վանքով: Դէպի հարաւ նոյն անտառոտ լեռների և Արփաչայի շարունակութիւնն է, որից այն կողմը կապուտակ երկնքի տակ նոյնչափ կապոյտ եազիւրդը իւր ստորոտի գիւղերով: Եերգասարի արևելեան ստորոտում, հովտի մէջ, բղխում է հանքային աղբիւրը կարմաքաներկ գիծ թողնելով իւր հոսանքում երկաթաղի իջուածքից: Սորա մասին էր վերն ասած խօսքս, որ գուցէ այստեղ լինի ապաջրագութը:

Լեռնագագաթից ասոտիճանաբար իջնում եմ հարաւարև-մոնեան լանջով: Մի ահագին բեկոր բլուրի ժայռից պոկուելով հին տարիներում գլորուել է ստորոտում՝ ճակատը Հերհէր գետակի լիերայ: Ունի կրօնաւոր Գրիգոր անուն թողել է մեզ այդ բեկորի վերայ մի երկար արձանագրութիւն: Վերջը ջնջուած և անորոշելի: Ահա նորա պատճէնք:

«Ի թուականիս Հայոց ԵՂԲ (592) ես Գրիգոր անարժան կրօ-նաւոր ի հայրապետութեան Յովանիսի մնձահամբաւ լուսաւոր-չի եկի ի տեղի յայս և բակեցայ ի տան մեծապատիւ քահա-նայի Գագիկ երիցոյ՝ աթուակալ եկեղեցոյ և իշխան ժողովը գե-տեան և եղէ ես ընդ ժառանգորդս նորա կացի ի միասին և էր պակասեալ քահանայ ի տանէ նորա ի բազում ժամանակաց սարկաւագն տղայ հասակաւ էառ զպատիւ քահանայու-թեան և կիսաւրեա ժամանակաւք փոխեցաւ առ Գրիստոս և էած խաւար յետամնաց իւրոց և աշենքբրնոր խաւարեալ ի յաշաց տեսութենէ և նու էր լոյս կենաց նորա շիջաւ մշնի մեք զեկեղեցիս ի բարեխաւութիւն հոգւոյ իմայ և զաւգնու-թիւն աշխատաւորաց ի հաստատութիւն մանկանս իմոյ Գրի-գորոյ և յառաջումն Սարգօի վերակայի ժողովոյս ևս տանու-տիրա Սոյն արձանագրութեան մէջ յիշած Գագիկ երի-ցու որդին է կանգնեցրել մի խաչքար բերդաբլրի գտպաթում:

Այս տեղից թէեւ կարելի էր անցնել գետակի աջ ափը և Հերէրի ճանապարհով գնալ Թրքարնակ Խուլախլար գիւղը, սակայն ես առանց ճանապարհի, հովիտների և մացաների միջով գնում եմ գէպի հարաւ գետակի հոսանքի հետ։ Ահա դուրս եկայ երկայնաւուն բլուրի գլուխը, որ մի ժայռոտ ծայրով գալիս կախուում է գետակի ձախ եզրի վերայ՝ Հերէրից ոչ այնքան հեռու։ Հենց այդ ժայռոտ բարձրութեան վերայ ես նկատում եմ մի գեղեցիկ մատուռ, դուռը գէպի արևմուռք, գէպի գետակը ժայռի գլուխն այնքան սահմանափակ է, որ հազիւ կարողանում է զետեղել մատուռը։

Մատրան առաջ կայ մի հատ, այն ևս խոնարհուած, աւերակ դարձած սենեակ։ Զորըորդ կողմից (արեւմտեան) բոլորովին բայ փոքրիկ սրահը, իբրև նախագաւիթ մատրան, ունի մեծամեծ ամբողջովին սալերից առաստաղ և ճակաաս։ Սրահում կան երկու անարձանագիր տապանաքարեր։ Զորս քարե աստիճանից բարձրութեալ ես մոնում եմ սրահից մատուռի մէջ։ Նախքան մոնելը՝ նկատում եմ գրան վերը փորագրած խաչ, որի տղ և ձախ կողմում միմեանց հանդէպ կանգնած երկու աղաւնի։

Մատուռը շատ փոքրադիր է, պատերն ուխտաւորաց ծխից սեացած, ունի փոքրիկ սեղան՝ պատի մէջ հագուցած փոքրիկ վեմ քարով։ Սեղանի կամարաձեւ առաստաղի հիւսիսային մասում քանդակութէ մեծագիր թռչուն։ Մատրան տարեթիւը, մնունը, կառուցանողի նարատակը, մի խօսքով նորա հակիրճ պատմութիւնը աւանդուում է նորա հետեւեալ ընդարձակ շատ լաւ և պարզ փորագրած արձանագրութեան մէջ։

«Կամաւն հզօրին Աստուծոյ ես Նաշս միայնակեաց և հարազատ եղբայրն իմ Մաթուխն շինեցաք զսուրը եկեղեցիս յաղագս փառաւորելոյ սուրբ Նշանիս, որ յանուն սրբոյն Գէորգոյ զօրավարին, որ յաղագս հանդերձեալ արքայութեանն յուտայն, բազմաշարչար աշխատութեամբ։ և մեծ ջանիւ ի յաւարտուումն տծեալ կատարեցաւ ի թվին Զիջ. (746) ի հայրապետութեան տեառն Ստեփաննոսի Սիւնեաց աթուակալի և ի պարոնութեան այսմ տեղւոջ գեղապանծ իշխանիս Ա.արհամայ և բարեպաշ-

տուհոյ Մամքանայ և ամուսնոյն իւրոյ Գոնցալին և գեղեցկապոուղ շառաւիղացն Ուքանայ և Հաստնայ, Ամդաղայ . . . (գուցէ Ամդինայ) ձեզ սիրովն Քրիստոսի յիշեցէք զնաշ միայնակեացս և զծնօղս իմ ի մաքրափայլ աղօթս ձեր և որ սպասաւոր լինիք փառազարդ խորանիս, պարուիք ինձ Գ. օր պատարագ ի տարին զսուրբ Գրիգորին, զՄառզարդարին և զտւագ հինգ շարթին ինձ մատուցէք Նաշիս վասն սիրոյն Քրիստոսի անխափան և որ անփոյթ առնէ, դատի յամենակալ բերանէն Աստուծոյ:

Նաշի մատուռից գեղեցիկ տեսարան է ներկայացնում մեր աչքին դէպի վայր, դէպի գետակը և նորա գեղեցիկ ծառազարդ և ժայռապատ ձորը, որտեղից գետակի քաղցրիկ խոխոջիւնը քամու մեղմիկ ալիքների հետ համում է ականջիր, Գնալով դէպի հարաւ՝ ահա հասայ Բուլախլար անունով թրքաբնակ գիւղը Արդարե բուլախլար (աղրիւրներ): ըստորում գիւղի հիւսիսային կողմում, գետակի տջ ափում, վիթխարի քարակոյտների տակից բղյում են ամենառատ, սառնորակ վճիտ աղբիւրներ, որոնք հենց ինքեանք կարող են կազմել մի լաւ գետակ: Գիւղը նոր է և բնակիչք մեծ մասամբ բէգեր՝ գյողթել են մերձակայ գիւղերից:

Բուլախլարից ճանապարհո ընտրում եմ արդէն գետակի տջ ափով: Մի ժամկից յետոյ ես հասնում եմ թրքաբնակ Առկնջ գիւղը՝ վերոյիշեալ գետակի վերայ: Առ ինջը մի թշուառ գիւղ է, աղտոտ փողոցներով: գետնափոր տներով, անծառ և անպարտէզ տեսքով, բայց շնորհալի գող բնակիչներով: Արեւմն եղել է այսուեղ հայ բնակութիւն, ուզ երեւում է այժմ աւերակ եկեղեցի: Աերջինից մնացել են մարդաշափ բարձրութեամբ քարաշէն պատերը չորս որմնակից սիւներով, աւազանով և ձախակողմեան խորանով: Դուռը եղել է արեւմուեան կողմում: Սեղանի հարաւային պատուհանի շրջաքարի վերայ գրած է Աստուած ողորմեա Եղիսաբէթին: Ահա առաջին և վերջին արձանագրութիւնը Առինջ գիւղիւ Այս գիւղի անունը նոյնութեամբ յիշւում է Հերհէրի սուրբ Աստուածածնի պատի վերայ Գուգիւնց Գրիգորի արձանագրութեան մէջ:

Մի ժամ ևս գետակով գէպի յառաջ՝ մենք արդէն կի՞ցնենք Արփաչայի ձորը, ուրիմն իմ այս ուղղութեամբ ճանապարհորդելու վերջն կէտը։ Այժմ գնանք նորից Շարուրի սահմանը և այս տեղից մի այլ ուղղութեամբ կրկին բարձրանանք Դարալագեազի հետաքրքիր լեռները։ Նախ քան այստեղից հեռանալը, պատմեմ մի գէպք ներկայ Առինջի վերաբերութեամբ։

Մինչև 1853 թուականը Առինջում բնակուում էր մի աղքատ ազնուական թուրք՝ Շիրին Սուլթան անունով։ Նոյն թուականի Ռուս—Տաճկական պատերազմի հենց սկզբում գաղտնաբար գալիս է Տաճկաստանից մի տաճիկ քարոզիչ—լրտես (կաւիդ) և անցնում է Ղարաբաղի կողմերը։ Շուշի քաղաքում լրտեսը ծանօթանում է ոմն թուրք Զաֆարի հետ, այնուեղի բնակիչ, որին և պատրաստում է իւր նպատակի համար։ 1853 թուականի գարնանը՝ Զաֆարը լրտեսի հետ գալիս է Առինջ գիւղը Շիրին սուլթանի մօտ, որին երկուսն էլ կարողանում են համոզել թէ Օսմանեան զօրքը յաղթական ոյժով անյապաղ մտնելու է Ռուսաց սահմանը, վասնորոյ տեղական թուրք տարրը ապատամբութեան պատրաստելու համար կարեսը է Շիրին սուլթանի մասնակցութիւնը, որին և խոստանում են հրապուրիչ պաշտօններ, մինչև անգամ փաշայութիւն։

Շիրին սուլթանը համաձայնում է։

Գործին հաստատութիւն տալու նպատակով լրտեսը վերցնում է իւր հետ Արզրում փաշային ներկայացնելու Շուշեցի Զաֆարին և Արգեազ գիւղի բնակիչ Ասգիլի բէզին և Ալակպարին։

Այս երեքը շատ անփոյթ վերադառնալով Արզրումից՝ բերում են Վալիից Շիրին սուլթանին մի յանձնարարական նամակ և նուէր կարմիր մահուդէ վերարկու։ Այդքանը հերիք էր սուլթանին մուտանալ տալու իւր ստանձնած գործի չափազանց գժուարութիւնը և նորանից ծագած վտանգը։ Նորան իսկոյն շրջապատեցին նորա երեք եղբարքը՝ Մամիչ բէգ, Հէյդարկուլի բէգ և Աբասկուլի բէգ, Երևանի գաւառի Զղին մշալի Զոմուշ-բասան գիւղի բնակիչ Հիւսէին կուլի՝ մականուամբ Թարի թան-

մազ (Առոտուած չճանաչող), նորա եղբայր Հաստինը, Դարալագեցողի Զիւլ գիւղացի Հաշիմը, Ալիմարդանը և նորա որդին Օրուջը, Այասեցի Սէյբիդ Ահմադը և Սուլէյմանը. Կուրդիուլախցի՝ Մամօրզայ, Հերհէրցի՝ Խոմոյիլը, Զաֆարը և այլ տեղերից շատ մարդիկ, որոնցով կազմուեցաւ մօտ յիսուն հոգուց մի աւազակաբարոյ խումբ՝ Շիրին սուլթանի առաջնորդութեամբ։

Դարալագեցեազի թուրք տարրի առաւելութիւնը, երկրի աշխարհագրական յարմարութիւնը, նախինեանի (որի գտւառի մասն էր կազմում այն ժամանակ Դարալագեցը) գտւառական էշխանութեան թուլութիւնը լիովին նպաստեցին Շիրինի յանդուգն մտադրութեանը։ Աւազակ խուրմը սկսեց իւր յարձակողական գործունէութիւնը, որից զարհուրուած թուրք և հայ գիւղեր ուղարկում էին Առյնջ՝ բեռներով տիւր, ցորեն, ոչխարներ, հաւեր, ձի, զէնք և այլ շատ պիտոյքներ՝ ինչ կըպահանջէր խումբը։

Եթէ գիւղերից մինը կամ միւսը վսուահանում էր չկտտարել Շիրին սուլթանի պահանջը՝ իսկոյն ենթարկուում էր կողոպուտի։ Դուսչի հայաբնակ գիւղը թէե տալիս էր որոշած տուրքը, սակայն օր ցերեկով կողոպուեցաւ խմբից, պատճառ ոքնոցանից մինը իրեւ թէ ծածուկ յայտնել է նախինեանի գաւառապետին Շիրինի արարմանց մօսին։ Կողոպուում են մինչեւ անգում գիւղական քահանայի գրեանքը։ Աղքեանդ գիւղի պետական հարկը յիսուն ուուրլի նախինեանի գանձարանը տանելու ժամանակի՝ Մտմիշ բէգը կողոպում է։

Այսքան խայտառակութիւնները կատարուելուց յետոյ նախինեանի գաւառապետը հազիւ ուղարկեց իւր օգնական Գասպարեանցին, որ գալով Առյնջ, ոչ միայն ոչինչ չէ կարողանում անել, այլ և ինքը գերի է բռնուում սուլթանի մօտ, որը նորում է նորա զէնքը, հանդերձը, ձին և իւրեան սպառնում է ոպանելու, բայց մի կերպով ազատում է նորան Շիրինի մայրը։

Շիրինի ասպատակութիւնը շարունակուում է մօտ մի տիս կազակների մի ամբաղջ խումբ զբաղուած էր Շիրինին հալածելու և խումբը ցըելու։ Աերջապէս ձերբակալում են շա-

տերին։ Հալածելու ժամանակ Շիրինին փաշալի կողմից նոռից կարմիր ջուբբան ահից կոխում են մածնի թուլուղի մէջ կողման+էտուլն գիւղում, ուր ես մի քանի անգամ լսած եմ նորանց ծիծալելով պատմելու միջոցին։

Շիրին սուլթանը գերդաստանով փախչում է Տաճկաստան։ Նորու եղբայրները թողութիւն խնդրեցին և ստացան։ Շատերը, որ անյայտ էին իշխանութեանը, լուսութեամբ վերադարձան իւրեանց տները։ Խսկ ջուլեցի Ալիմարդանը, իւր որդի Օրուջը, Հերհերցի Խսմայիլը և Այարցի Խսկեանդարը, որոնք շատերին գայթակղեցրել էին խմբին մասնակցելու։ աքսորուեցան Տաճը բոլի նահանգը, ուր վերջին երկուսը մեռան, իսկ Ալիմարդանը և իւր որդի Օրուջը մի քանի ժամանակից յետոյ թողութիւն սումանալով վերադարձան իւրեանց տուն։ Այսպէս են պատմում այս անցքը այժմ շատ շատերը։

Այս իրողութիւնը արտայայտում է թուրք տարրի բնաւորութիւնը։ Վերջին Ռուս - Տաճկական պատերազմի ժամանակ ևս լինում էին Դարալագեազի այս և այն գիւղում գաղանի շարժումներ, բայց կառավարութեան շուտափոյթ միջոցները խսկոյն զապում էին անհեռատես մարդկանց։

(Ծարունակէլ)

ԳՈԶՔԵՐՈՒՆԻ

ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ.

Այն օրից, երբ գերմանական մանկավարժութիւնը ազդեցութիւն ունեցաւ հայ մանկալարժական գրականութեան վերայ՝ գերմանական կրթութիւն ստացող հայ երիտասարդների միջնորդութեամբ, մեր գպրոցների գասատուութեան ձևն ևս փոքր առ փոքր փոփոխութեան ենթարկուեցաւ և թողեց հին ուղղութիւնը։ Նոր առարկաներ և նոր մեթոդներ մուտք գործեցին հայ գպրոցի մէջ, Թէև վերանորոգման գործը շարունակուում է, սակայն ոչ մի առարկայ, մեթոդի վերանորոգման կողմից՝ այնչափ յետ չէ մնացել, որչափ էրնի սասացաւք։ Թէև կրօնի գասագրեր շատ են լոյս տեսել, սակայն այդ շատու-